

ներէն մին՝ կործանեց Ս. Գերեզմանը (Մագպերե կշ—Մագquussawահ) եւ ջնջեց հետքը: Քանդուժը սկսաւ երեքշաբթի, 400ին Սէֆէր ամսուն վախճանէն հինգ օր յառաջ. գրաւեցին բոլոր Վիւլիբը եւ յազճները, վերցուցին տարին կարասինբըր ոսկեղէն եւ արծաթեղէն անօթներով:

Այս քանի մը տողերով է որ Եհանա Իպն Սայիտ կը պատմէ անհետացումը կոստանդիանոսեան կառուցուածքներուն՝ որ հակառակ բազմաթիւ փոփոխութիւններուն, տակաւին հպարտօրէն կանգուն կը մնային ԺԱ. դարու արշալոյսին: Պատմիչին այս կարեւոր հատուածին տարերքը արժանի են որ մի առ մի կշռագատուին: Եթէ այս վանտալական արարքը համեմատութեան ղնենք Յ14ին Պարսից կողմէն ի գործ դրուած հրդեհումին, պէտք կ'ըլլայ խոստովանիլ թէ վերջին քանդումը աւելի արմատական էր: Այս վերջինը չէր նմաներ կրակի մը՝ որ այրեց ինչ որ վայտ էր և կերպաս, առանց խորտակելու շինուածքները. այլ քանդումի ձեռնարկ մըն էր ան պազարիւնութեամբ հաշուուած եւ կանոնաւորութեամբ գործադրուած: Սակայն պէտք է մտածել թէ քանդիչներուն գործը զիւրառիկ բերդի մը հետ չէր, այլ յոգմէական հզօր շինուածքի մը՝ որ ընծայեց զիմադրութիւնը մը, որու մասին գուցէ չէին անդրադարձած: Տանիքները փլցուցին, պատերը թագատեցին իրենց վերի վիմաշարքերէն: Բայց երբ պատերուն աւելի վարը իջան, գործը այնքան դժուարացաւ, որ լքեցին գայն: Հրաժարեցան քակելէ Բոյրուշեկի ժայռին յեցած խոշոր քարերը, ինչպէս նաև ուրիշ շէնքերու վարի մասերը: Ժամանակագիրին ըսածին նայելով ամէն ինչ քանդեցին մինչև հիմերը, քացի այն մասին՝ որուն ֆակուսըր դժուարին եր: Մուճիբ էտ-աին յետոյ միևնոյնը պիտի ըսէ սրբավայրին հետագայ վերաշինութեան առթիւ. «Կ'երեի թէ, կ'իզրակացնէ, քանդումը ամբողջական չէր, սակայն մեծագոյն մասը կործանուած էր. Աստուած գիտէ ճշմարտութիւնը»:

Գիտնալով որ Քրիստոսի Գերեզմանն էր որ պատճառ կ'ըլլար այս գեղեցիկ շէնքերուն կառուցման եւ թէ քրիստոնէից բարեպաշտութիւնը արուեստին բոլոր գեղեցկութիւններէն վեր կը դասէր զայն. քանդողները մասնաւոր սաստկութեամբ յարձակեցան: Անոնք երկաթէ գործիքներով խորտակեցին անոր ժայռուտ պատերը: Արտք ժամանակագիրը այս գործողութիւնը